ՍՏԵՂԾՎԵԼ Է ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի 2012 թվականի դեկտեմբերի 17-ի «Արցախահայության ազգային-ազատագրական պայքարի՝ ղարաբաղյան շարժման 25-րդ տարեդարձի տոնակատարության պետական հանձնաժողով ստեղծելու մասին» ՆՀ-82-Ա հրամանագիրը և Ստեփանակերտ քաղաքում արցախահայության ազգային-ազատագրական պայքարի՝ ղարաբաղյան շարժման 25-րդ տարեդարձի տոնակատարության կազմակերպման նպատակով, Ստեփանակերտի քաղաքապետ Սուրեն Գրիգորյանը որոշում է ստորագրել տոնակատարության միջոցառումների կազմակերպման և ապահովման քաղաքային հանձնաժողով ստեղծելու մասին՝ հետևյալ կազմով.

Ա.Հակոբյան	- քաղաքապետի տեղակալ /հանձնաժողովի նախագահ/
Կ.Մարգարյան	-կրթության և սպորտի բաժնի պետ /հանձնաժողովի նախագահի տեղակալ/
Լ.Հակոբջանյան	- մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության բաժնի պետի պաշտոնակատար /հանձնաժողովի նախագահի տեղակալ/
Դ.Միքայելյան	- մամուլի քարտուղար
Է.Առուշանյան	- սպորտի գծով գլխավոր մասնագետ
Ս.Սարգսյան	- «Ստեփանակերտ» շաբաթաթերթի խմբագիր
Լ.Բարսեղյան	-«Ստեփանակերտի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ տնօրեն
Լ.Գրիգորյան	- Արցախի ազատամարտիկների միության վարչության անդամ /համաձայնությամբ/
Գ.Աբրահամյան	- ԼՂՀ Ոստիկանության Ստեփանակերտ քաղաքի ոստիկանության վարչության պետի տեղակալ՝ ծառայության գծով /համաձայնությամբ/
Հ.Ասրյան	- Ստեփանակերտի քաղաքային համայնքի ավագանու անդամ
Ս.Մելքումյան	- Ստեփանակերտի քաղաքային համայնքի ավագանու անդամ

Նույն որոշմամբ հաստատվել է Ստեփանակերտ քաղաքում արցախահայության ազգային-ազատագրական պայքարի՝ ղարաբաղյան շարժման 25-րդ տարեդարձի տոնակատարությանը նվիրված միջոցառումների ծրագիրը: